

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և նրա ստորաբաժանումների կողմից 2016 թվականին աշխատանքներ են տարվել համակարգի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման ուղղությամբ: Շարունակական բնույթ են կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության կատարելագործման, դատաիրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2016 թվականին նախարարության առջև դրված կարևորագույն խնդիրներից է հանդիսացել մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրականացումը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և համակարգի ստորաբաժանումների գործունեության բարելավումը:

Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել համակարգի սոցիալ-տնտեսական զարգացման, գործունեության բարեփոխման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման ուղղությամբ:

Գործուն և համակարգային բնույթ է կրել համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերհանված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

2016 թվականի հունվարի 14-ին նախարարը Երևան քաղաքում հանդիպել է ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացքում նախարարները քննարկել են արդարադատության ոլորտում երկկողմ համագործակցության խորացմանն ու զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր: ԼՂՀ և ՀՀ արդարադատության նախարարները ստորագրել են հուշագիր, ըստ որի 2014թ. հունիսի 25-ին «գործընկերային համագործակցության մասին» հուշագրում արձանագրության տեսքով ավելացվել է մի կետ, որի համաձայն ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության աշխատակիցներին տրվել է հնարավորություն՝ օգտվել www.e-register.am համակարգի ընդհանուր բազայից:

2016 թվականի հունվարի 28-ին տեղի է ունեցել մամլո ասուլիս՝ 2015 թվականի ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատանքային գործունեության վերաբերյալ, որի ընթացքում նախարարը պարզաբանել է լրագրողների կողմից հնչեցված բազմաթիվ հարցեր:

2016թ. փետրվարի 24-ին ԼՂՀ Ազգային ժողովում ԼՂՀ արդարադատության նախարարը ներկայացրեց արդարադատության նախարարության կողմից մշակված մի շարք օրինագծեր: Մասնավորապես ընդունվեցին ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի նախագիծը, ԼՂՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ օրենքի նախագիծը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում սահմանված կարգով առանց վարորդական իրավունքի և անսթափ վիճակում մեքենա վարելու, ինչպես նաև սթափության վիճակի գնումից խուսափելու դեպքերում և Հասարակական կազմակերպությունների մասին ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ օրենքի նախագիծը:

2016 թվականի մարտի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության և Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» պատասխանատուների միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի՝ գործընկեր կառույցն իր պատրաստակամությունն է հայտնել համապատասխան մասնագիտությունների գծով օգնել մեթոդաբանական ձեռնարկներով, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև փորձագիտական, գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում տրամադրել լաբորատոր և ուսումնական բազաներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարար Արարատ Դանիելյանը կարևորել է փոխհամագործակցության անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն կնպաստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փորձաքննության ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը:

Սույն թվականի ապրիլ ամսում նախարարը ԼՂՀ Ազգային ժողովում ներկայացրել է ԼՂՀ քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, որի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր ԼՂՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածի վերնագրի և տեքստի բովանդակության համապատասխանեցման անհրաժեշտությամբ:

Ազգային ժողովում նախարարը ներկայացրել է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որի ընդունումը պայմանավորված է ԼՂՀ «Մարդու իրավունքների պաշտպանի» նշանակման համար նախատեսված տարիքային ցենզը նվազեցնելու անհրաժեշտությամբ:

Հաշվետու տարվա ապրիլին ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ ԼՂՀ շրջաններում նախարարության տարածքային ստորաբաժանումների անխափան աշխատանքը ապահովելու համար:

2016թ. ապրիլ ամսում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմից զորակոչվել են 14 աշխատակիցներ:

Ապրիլի 29-ին նախարարը մասնակցել է «Սահմանադրական բարեփոխումներ» հանձնաժողովի աշխատանքային նիստին:

Մայիս ամսում նախարարը այցելել է Հաղրութի և Ասկերանի շրջաններ, հանդիպելով նոտարիատի, ՔԿԱԳ և պետոեզիստրի ստորաբաժանումների ղեկավարներին, ծանոթացել առկա խնդիրների հետ ու տվել անհրաժեշտ ցուցումներ:

Հունիս ամսում նախարարը Ազգային ժողովում ներկայացրել է «Մանկության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին և «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք բոլորն էլ ընդունվել են առաջին ընթերցմամբ:

Հուլիս 22-ին նախարարը մասնակցել է ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի հերթական նիստին: Մտքերի փոխանակման արդյունքում որոշում է կայացվել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի շուրջ անցկացնել հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանձնաժողովի անդամները հանդիպել և քննարկումներ են անցկացրել խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական ուժերի, դատական համակարգի և մտավորականության ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և Արցախում գործող հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կառույցների ներկայացուցիչների ու լրագրողների հետ:

Նախարարը մասնակցել է նաև հուլիսի 30-ին կայացած սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի հերթական նիստին, որի արդյունքում մասնագիտական հանձնաժողովը միաձայն քվեարկությամբ հաստատել է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը:

Նախարարի հրամանով հաստատվել է նոտարների հետ նախապես քննարկված «Նոտարական էթիկայի կանոնները»: Օգոստոս ամսում նախարարը մասնակցել է նաև կառավարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 25-րդ տարեդարձին նվիրված նիստերին:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարը դատական փորձաքննությունների լաբորատորիայի մի շարք աշխատակիցների շնորհել է դասային աստիճաններ:

Օգոստոս ամսում լույս է տեսել արդարադատության նախարարի հեղինակած ուսումնական ձեռնարկը բուհերի ուսանողների համար «Արցախի Հանրապետության Սահմանադրական Իրավունքը» վերնագրով:

Սեպտեմբերի 7-ին նախարարը այցելել է Մարտակերտի շրջանի Գետավան գյուղ եւ մասնակցել Արցախյան ազատամարտում զոհված գետավանցի ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիրի բացման հանդիսավոր արարողությանը:

Սեպտեմբեր ամսում նախարարը մասնակցել է ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի բազմաթիվ նիստերի:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարը, սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի ներկայացման ու պարզաբանման նպատակով, հանդիպումներ է ունեցել 11-րդ և 8-րդ ավագ դպրոցների ուսուցչական անձնակազմերի և աշակերտների, «Պետական արխիվ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների և Քարվաճառում՝ վարչակազմի ղեկավարի, համայնքների ղեկավարների, դպրոցի տնօրենների, պետական մարմինների ղեկավարների և աշխատակիցների հետ: Հանդիպումների ընթացքում նախարարը դիտարկել է ձևով ներկայացրել է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը և պատասխանել ներկա գտնվողների հնչեցրած բոլոր հարցերին:

Հոկտեմբերի 11-ին նախարարը այցելել է Հաղարթի շրջանի տարածքային ստորաբաժանումներ, տեղում ծանոթացել առկա խնդիրներին և տվել անհրաժեշտ ցուցումներ:

Հոկտեմբեր ամսում նախարարը մասնակցել է ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նիստերին:

Նոյեմբեր ամսում նախարարը մասնակցել է ԼՂՀ նախագահին կից սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նիստերին:

Դեկտեմբերի 29-ին նախարարը, որպես հանրապետության Նախագահի ներկայացուցիչ, ազգային ժողովում ներկայացրեց Սահմանադրության նախագիծը:

Դեկտեմբերի 30-ին նախարարը, մի շարք այլ պաշտոնյաների հետ այցելել է մարտական հենակետեր և տեղում շնորհավորել զինվորների և սպայակազմի զալիք Ամանորն ու Սուրբ ծնունդը: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նախարարի մոտ կազմակերպվող քաղաքացիների ընդունելությունները: 2016 թվականին նախարարի մոտ կազմակերպվել է 85 (102)՝ քաղաքացիների ընդունելություն, որոնց ընթացքում քննարկվել և լուծվել են քաղաքացիներին հուզող մի շարք հարցեր:

2016 թվականի դեկտեմբեր ամսում ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության կողմից հաստատված և ԼՂՀ արդարադատության նախարարության հետ համաձայնեցված՝ անչափահասների շրջանում համալիր պրոֆիլակտիկ աշխատանքների շրջանակներում, նախարարության ներկայացուցիչները զեկույցներով հանդես են եկել N1, N2, N3, N4, N 9 հիմնական, N8 և N 11 ավագ դպրոցներում և Երևանի Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղում:

Հաշվետու տարում նախարարությունը կազմակերպել է սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգում, որի արդյունքներով ստուգումն անցած են ճանաչվել երկու մասնակից, որոնց տրվել է սնանկության կառավարչի որակավորման վկայական:

* Փակագծերում նշված են 2015 թվականի տվյալները:

Նախարարության ստորաբաժանումների կողմից 2016 թվականին հոգուս պետական բյուջեի գանձվել է 108.805.255 (137.042.109) դրամ գումար:

Նախարարության համակարգում ընդգրկված ստորաբաժանումների գործունեությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

1. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման ոլորտ

Արդյունքները: 2016 թվականին նախարարությունում մուտքագրվել են 5119 (5781) նամակ-գրություններ, որոնցից 3498-ը (3885) պետական մարմինների և նախարարության տարածքային ստորաբաժանումների, 1577-ը (1840) աշխատակազմի աշխատակիցների (կազմակերպչական բնույթի), կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, իսկ 46-ը (56) քաղաքացիների կողմից:

Առօրյա բնույթ են կրել քաղաքացիների ընդունելությունները, նրանց իրավական օգնություն ցուցաբերելու աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց և նրանց առաջին հերթի ժառանգներին պարզաբանումներ տալու, ստացված դիմումները հաշվառելու և ընթացքավորելու, համապատասխան կարգավիճակ ստացած անձանց վկայականներ տրամադրելու ուղղությամբ: Նախարարությունում հրավիրվել և անց է կացվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց կամ նրանց առաջին հերթի ժառանգներին վկայականներ տվող հանձնաժողովի 2(1) նիստ, որի արդյունքում 4 (3) քաղաքացիների շնորհվել է բռնադատվածի կարգավիճակ և տրվել են համապատասխան վկայականներ:

2. Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է տարվել կադրերի ընտրության, նրանց ստաժավորման, ատեստավորման և որակավորման բարձրացման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:

2016 թվականին «Ազատ Արցախ» թերթին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերությանն են առաքվել ԼՂՀ ԱՆ աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի առաջին կարգի մասնագետի 2 և ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի գլխավոր մասնագետի 1 թափուր պաշտոնները զբաղեցնելու վերաբերյալ հայտարարությունները, որոնց վերաբերյալ համապատասխան գրությունները ուղարկվել են ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ:

2. Թղթակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն են ներկայացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների նոր անվանացանկը և համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Կազմվել են նոր նշանակված և գրանցամատյանում ընդգրկված քաղաքացիական ծառայողների հաշվառման տվյալների փոփոխությունների մասին (Ձև7) և քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողների մասին տեղեկությունները (Ձև 9):

ԼՂՀ ՔԾԽ կողմից ուղարկված ժամանակացույցի համաձայն տրամադրվել են ԼՂՀ ԱՆ աշխատակազմի ատեստավորման ենթակա գլխավոր պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկությունները, ինչպես նաև 2017թ. ատեստավորման և վերապատրաստման ենթակա աշխատակազմի քաղծառայողների վերաբերյալ տեղեկություններն ու տարեկան հայտը:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել 2016 թվականի մարտ և նոյեմբեր ամսում կայանալիք թվով 9 քաղաքացիական ծառայողների ատեստավորման արդյունավետ անցկացման ուղղությամբ, մասնավորապես՝ համապատասխան հարցաշարերը ստուգվել և մուտքագրվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գործառույթների իրականացում» ծրագիր:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել 2016 թվականի հուլիսի 4-ից մինչև հուլիսի 16-ը, ներառյալ, ներառյալ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում կազմակերպված քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակիցների մասնակցությունն ապահովելու և տարածքային բաժինների աշխատակիցներին գործուղման վկայականների տրամադրման ուղղությամբ:

Լրացվել են աշխատակիցների անձնական գործերում առկա վերգիրները, ինչպես նաև ստուգվել ու համակարգվել են անձնական գործերում առկա փաստաթղթերը:

ԼՂՀ ՔԾԽ են ուղարկվել մի շարք տարաբնույթ գրագրություններ:

3.Իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում պետական իրավական փորձաքննության են ենթարկվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրական ակտերի թվով 325 (602) նախագծեր, որոնցից 35 (44)-ը՝ Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության օրենքների, 273 (543)-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումների և 17 (14)-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի որոշումների, որոնց վերաբերյալ տրվել են բանավոր և գրավոր առաջարկություններ, որոնք մեծամասամբ ընդունվել են: 2016 թվականին բաժնի կողմից մշակվել և սահմանված կարգով ընթացքավորվել են «Սնանկության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքների նախագծերի փաթեթը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքների, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 5-ի N544 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N743-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի արխիվային գործի ոչնչացման կարգը սահմանելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետական միասնական գրանցամատյանի տեղեկություններն ինքնաշխատ եղանակով ստանալու իրավունք ունեցող մասնավոր անձանց խմբերի (ըստ գործունեության տեսակների) ցուցակը հաստատելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N987-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումների նախագծերը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ԼՂՀ արդարադատության նախարարի հաստատմանն ու պետական գրանցման են ներկայացվել ԼՂՀ արդարադատության նախարարի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 176 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող արխիվագիտական

ծառայությունների գների հաշվարկման կարգը և գնացուցակը հաստատելու մասին» հրամանները:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել թվով 99 գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, իսկ 2-ի գրանցումը մերժվել է, այն «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներին չհամապատասխանելու հանգամանքով պայմանավորված (2015 թվականին գրանցվել են թվով 174 գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, իսկ 1-ի գրանցումը մերժվել է):

Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել տեղական ինքնակառավարման մարմինների թվով 242 նորմատիվ իրավական ակտեր, (2015 թվականին գրանցվել են թվով 267 տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտեր, իսկ 1-ի գրանցումը մերժվել է):

Օրենքով սահմանված կարգով հաշվառվել, համակարգվել և պահպանվել են 2016 թվականին ստացված ԼՂՀ իրավական ակտերի պաշտոնական օրինակները:

Ուսումնասիրվել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բալասանյանի, Ռ. Իսրայելյանի. Է. Աղաբեկյանի և Լ. Հովհաննիսյանի կողմից օրենսդրության նախաձեռնության կարգով ներկայացված «Զինապարտության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որի արդյունքում ներկայացվել է համապատասխան առաջարկություն:

4. Իրավական տեղեկատվական համակարգի ոլորտ

Արդյունքները: 2016 թվականին «Arlexis» ծրագրում իրականացվել են՝

1) 2015-2016 թվականների 82 ԼՂՀ օրենքների (որոնցից՝ 42-ը մայր փաստաթուղթ, 40-ը՝ ինկորպորացիա) ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

2) 2016 թվականի ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

3) 2016 թվականի ԼՂՀ Ազգային ժողովի 1 որոշման ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

4) 2016 թվականի ԼՂՀ նախագահի 9 հրամանագրերի (որոնցից՝ 6-ը մայր փաստաթուղթ, 3-ը՝ ինկորպորացիա) և 4 կարգադրությունների (որոնցից՝ 2-ը մայր փաստաթուղթ, 2-ը՝ ինկորպորացիա) ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի

ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

5) 2016 թվականի ԼՂՀ վարչապետի 4 որոշումների (որոնցից՝ 2-ը մայր փաստաթուղթ, 2-ը՝ ինկորպորացիա) ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

6) 2016 թվականի ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի 1 և ԼՂՀ Գերագույն դատարանի 33 որոշումների ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

7) 2016 թվականի ԼՂՀ վերահսկիչ պալատի խորհրդի 1 որոշման ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

8) 2006-2014 թվականների ԼՂՀ կառավարության 4048 որոշումների (որոնցից՝ 2921-ը՝ մայր փաստաթուղթ, 1127-ը՝ ինկորպորացիա) սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները.

9) 2014-2015 թվականների ԼՂՀ կառավարության 405 որոշումների սրբագրման, աշխատանքները.

10) 2003 թվականների 25 ԼՂՀ գերատեսչական ակտերի (որոնցից՝ 19-ը՝ մայր փաստաթուղթ, 6-ը՝ ինկորպորացիա) ներմուծման, սրբագրման, տեքստի հաստատման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, վերջնական հաստատման և հաստատման աշխատանքները:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ անվաճառ իրավական տեղեկատվական համակարգը իր մեջ ներառում է թվով 9316 փաստաթուղթ:

5. Իրավական ակտերի պաշտոնական հրատարակման ոլորտ

Արդյունքները: 2016 թվականի ընթացքում իրավական ակտերի պաշտոնական հրատարակման բաժնի կողմից կազմակերպվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի», «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» ու «Քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» պաշտոնական պարբերականների հրատարակման աշխատանքներ:

Կազմակերպվել ենք տեղեկագրերի հրատարակման համար ներկայացվող նյութերի ամփոփման, համակարգման և տեքստերի ուղղագրության ստուգման աշխատանքները:

Յուրաքանչյուր ամիս հրատարակվել է երկու կամ երեք պարբերական:

2016 թվականի ընթացքում հրատարակվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի» 23(290), 24(291)- 2015 թվականի և 21 (22), «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» 14(129)-2015 թվականի և 12 (13) ու «Քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» 8(8) համարներ:

Տեղեկագրերում զետեղվել են ԼՂՀ ազգային ժողովի կողմից ընդունված 53 (76) օրենք, ԼՂՀ Նախագահի 7 (6) հրամանագիր և 3 (2) կարգադրություն, ԼՂՀ կառավարության 241 (304) և ԼՂՀ վարչապետի 2 որոշում, ԼՂՀ վերահսկիչ պալատի 2015թ. տարեկան հաշվետվությունը, ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի 1(2) և ԼՂՀ գերագույն դատարանի 42 (39) որոշումներ, 104 գերատեսչական նորմատիվ ակտեր (165) և նախարարությունների ու գերատեսչությունների կողմից տրված լիցենզիաների, լիցենզիաների գործողության դադարեցման և կասեցման մասին տեղեկություններ:

Հաշվետու տարում նախարարության պատվերով հասարակությանը ներկայացնելու նպատակով հրատարակվել է թվով 200 հատ Արցախի Հանրապետության սահմանադրության նախագիծը:

Նախարարության կողմից ազատ կարգով իրացվել է 324 /370/ տեղեկագիր, որից ստացված 678.522 /804.820/ դրամ գումարը փոխանցվել է պետական բյուջե:

6. ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության գործունեության կազմակերպում

Արդյունքները: 2016 թվականին ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից աշխատանքներ են տարվել գործակալության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ուղղությամբ: Առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոտարական գրասենյակների և ՔԿԱԳ տարածքային բաժինների ընթացիկ գործունեությունը: Կատարվել է ստացված դատական ակտերի ուսումնասիրություն և հաշվառում:

Նշված ժամանակաշրջանում անց է կացվել նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննություն: Արդյունքում անցումային շեմը հաղթահարած մասնակիցներին տրամադրվել է վկայականներ:

Բացի այդ, Քաշաթաղի և Հադրութի նոտարական տարածքների նոտարները գործուղվել են ՀՀ ք. Երևան նոտարական պալատի կողմից կազմակերպված նիստին մասնակցելու համար, որտեղ քննարկվել է նոտարի արդի զարգացումը ՀՀ-ում թեման:

Հաշվետու տարում ՔԿԱԳ հանրապետական արխիվի պետը գործուղվել է ՀՀ արդարադատության նախարարություն ՔԿԱԳ միասնական նոր էլեկտրոնային կառավարման համակարգին և ակտային գրանցումների թվայնացման գործընթացին ծանոթանալու համար, որից հետո ՔԿԱԳ արխիվում սկսվել է թվայնացման գործընթացը: Արդյունքում ՔԿԱԳ արխիվի կողմից թվայնացվել է 3.539 ակտեր:

2016 թվականի առաջին կիսամյակում գործակալության 3 աշխատող գործուղվել են ՀՀ ք. Երևան՝ ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության կողմից կազմակերպվող նիստին մասնակցելու համար: Այնտեղ առաջարկվել է Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում ստեղծված համապատասխան հանձնաժողովներին համագործակցել և աջակցել հետագայում իրականացվող տարածաշրջանային գործունեության ոլորտում քաղաքացիական կացության ակտերի գրանցման և բնակչության բնականոն շարժի վիճակագրության համակարգի բարելավման: Գործակալության կենտրոնական մարմնի կողմից 2016 թվականի առաջին կիսամյակում ստուգման է ենթարկվել ՔԿԱԳ Ասկերանի, Մարտակերտի և Հաղրութի տարածքային բաժինները, ինչպես նաև նույն շրջանների նոտարական գրասենյակների 2015-2016 թթ. հունվար-մարտ ամիսների գործունեությունը: Արդյունքում վեր հանված սխալները արձանագրվել են համապատասխան տեղեկանքներում: Իսկ երկրորդ կիսամյակում ստուգման են ենթարկվել Ստեփանակերտի թիվ 1 և թիվ 2 նոտարական տարածքների կողմից 2015 և 2016 թթ. Կազմված կտակների օրինականությունը:

- 2016 թվականին արտաբյուջե է մտցվել 9.797.900 (11.422.600) դրամ, որից՝
- ա. նոտարական գրասենյակների կողմից - 7.250.450 դրամ,
- բ. ՔԿԱԳ տարածքային բաժինների և գործակալության
- գ. կենտրոնական մարմնի կողմից - 2.547.450 դրամ:

Նշված ժամանակաշրջանում գործակալության կողմից ընթացքավորվել են մի շարք նամակներ, գրություններ, հարցումներ և դիմումներ, որոնց առթիվ տրվել են իրավաբանական պարզաբանումներ: Կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ, տրվել գործող օրենսդրության պարզաբանումներ:

Գործակալության գործունեությունն ըստ առանձին-առանձին ոլորտների ունի հետևյալ պատկերը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպում.

Արդյունքները: Հաշվետու ժամանակաշրջանում առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեությունը: Ընթացքավորվել են 237 (276) հարցումներ՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների պատճեններ, վկայականների կրկնօրինակներ և ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ ստանալու մասին: Նշված հարցումներից 3-ը կատարվել է անմիջական ԼՂՀ արդարադատության նախարարության միջոցով, իսկ 234-ը՝ ՀՀ արդարադատության նախարարության և ԼՂՀ արտաքին գործերի նախարարության միջոցով: Գործակալության կողմից այլ պետություններ են ուղարկվել 16 հարցում: Նշված 16 հարցումներից 14-ը ուղարկվել են ՌԴ, 1-ը՝ Թուրքմենստանի Հանրապետություն և 1-ը՝ Վրաստանի Հանրապետություն: Բացի այդ, տրվել է 224 (213) ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքներ, որոնց դիմաց գանձվել է 197.000 (186.000) դրամ պետական տուրք: Փաստորեն, հաշվետու ժամանակաշրջանում տրված ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքների թիվը 2015 թվականի համեմատությամբ աճել

է 11-ով, իսկ պետական տուրքը՝ 11.000 դրամով: Նշված տեղեկանքներից 125-ը տրվել են տղամարդկանց (102), իսկ 99-ը՝ կանանց (111):

ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ներկայացրած ծննդյան, ամուսնության ակտերի գրանցման վերականգնման, անվան, հայրանվան, ազգանվան փոխման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ուղղման, փոփոխման և լրացման վերաբերյալ նյութերը մանրակրկիտ ուսումնասիրվել, ստուգման են ենթարկվել, որի արդյունքում հաստատվել են 132 (170) եզրակացություններ: Փաստորեն, հաստատված եզրակացությունների թիվը համեմատած 2015թ. հետ նվազել է 38-ով: Նշված եզրակացություններից 10-ը (26) վերաբերվում է ակտերի գրանցման վերականգնմանը, 53-ը՝ (73) անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը և 69-ը՝ (71) ակտային գրանցումների ուղղմանը, փոփոխմանը և լրացմանը:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից առանց եզրակացությունը հաստատելու հետ է վերադարձվել ՔԿԱԳ Շահումյանի տարածքային բաժնի կողմից ներկայացված 2 գործ, որոնցից մեկը քաղաքացիական կացության ակտերի գրանցումներում ուղղման, փոփոխման և լրացման վերաբերյալ և մեկը՝ անվան, ազգանվան, հայրանվան փոխման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և համապատասխան ՔԿԱԳ տարածքային բաժիններ են առաքվել օտարերկրյա քաղաքացիների ամուսնության գրանցման թույլտվության 13 (28) նյութեր, որոնցից՝

ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժին	-5(16)
Ասկերանի	-1(4)
Մարտակերտի	-1(0)
Մարտունու	-1(4)
Հաղրութի	-1(2)
Քաշաթաղի	-4(2)

Ամուսնացողներից 2-ը հանդիսանում են Թուրքմենստանի Հանրապետության, 1-ը՝ Ուկրաինայի Հանրապետության, 1-ը՝ Հնդկաստանի Հանրապետության, 1-ը՝ Վրաստանի Հանրապետության, 3-ը՝ Սիրիայի Հանրապետության, 1-ը՝ Ղազախստանի Հանրապետության, 2-ը՝ Հայաստանի Հանրապետության, 4-ը՝ ՌԴ և 11-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ:

Գործակալության կողմից յուրաքանչյուր ամիս ստուգման է ենթարկվել քաղաքացիական կացության ակտային գրանցումների լրացման օրինականությունն ու հիմնավորվածությունը, ինչը իր արտացոլումն է ստացել կազմված տեղեկանքներում

Յուրաքանչյուր ամիս գործակալության կողմից ստուգվել է քաղաքացիական կացության ակտային գրանցումների լրացման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Արդյունքում պարզվել է, որ 7 (20) ակտային գրանցումներ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից լրացվել են թերություններով և բացթողումներով: Նշված թերությունները վերացնելու և հետագայում այդպիսի չկրկնելու նպատակով՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների պետերին տրվել են համապատասխան հանձնարարականներ:

ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքային գործունեության մասին վիճակագրական տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ վերջիններիս կողմից 2016թ. կատարվել են 5.022 (5.512) քաղաքացիական կացության ակտային գրանցումներ: Փաստորեն, կազմված ակտային գրանցումների քանակը համեմատած 2015թ. հետ նվազել է 490-ով: Բացի այդ, ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից կատարվել են 76 ուղղումներ (77), տրվել են 852 (897) կրկնօրինակ վկայականներ և 668 (594) տեղեկանքներ՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին, ինչպես նաև վկայականի կրկնօրինակ ստանալու համար այլ ՔԿԱԳ տարածքային բաժիններ են ուղարկվել 28 (21) ծանուցումներ:

Բացի այդ, ՔԿԱԳ բաժինների կողմից քաղաքացիներին տրամադրվել են այլ վայրերից ստացված 21 (16) տեղեկանքներ և վկայականների կրկնօրինակներ:

Փաստորեն, ընդհանուր առմամբ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից կատարվել է 6.667 (7.117) գործողություն: Գործողությունների քանակը համեմատած 2015թ. հետ նվազել է 450-ով:

Նշված գործողությունների դիմաց գանձվել է 6.911.000 դրամ պետական տուրք (7.412.000 դրամ): Փաստորեն, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ գանձված պետական տուրքը նվազել է 501.000 դրամով:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների ընդհանուր քանակից 2.478-ը վերաբերվում է ծննդյան ակտային գրանցումներին (2.590), որից՝

Առաջնեկ	- 838(888),
երկրորդ երեխա	- 793(854),
երրորդ երեխա	- 446(500),
չորրորդ երեխա	- 219 (208),
հինգերորդ երեխա	- 102(69),
վեցերորդ երեխա	- 33(34),
յոթերորդ երեխա	- 25 (17),
ութերորդ և բարձր	- 22(20),

Նշված ծնունդներից 2474-ը՝ կենդանածին են:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ ծննդաբերող մայրերի միջին տարիքը կազմում է 27.0 տարին:

Կատարվել են 26 զույգ երկվորյակ երեխաների ծննդյան ակտային գրանցում:

Ընդհանուր առմամբ 2015թ. հետ համեմատությամբ 2016թ. ծննդյան ակտային գրանցումների թիվը նվազել է 112-ով:

Ծննդյան ակտային գրանցումների ուսումնասիրությունից երևում է, որ ամենատարածված տղա երեխաների անուններն են հանդիսանում Դավիթ, Արման, Տիգրրան, Նարեկ անունները, իսկ աղջիկ երեխաների համար՝ Մանե, Նարե, Անի, Մարիա անունները:

2016թ. կատարվել են 1.222 (1.290) մահվան ակտային գրանցումներ, որից՝
մինչև 1 տարեկան երեխաները – 27
մինչև 5 տարեկան երեխաները – 1

Մահացած քաղաքացիներից 595-ը հանդիսանում են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 627-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ: 2016թ. կատարված մահվան ակտային գրանցումների թիվը 2015թ. համեմատությամբ նվազել է 68-ով:

2016թ. կատարվել են 934 (1.185) ամուսնության ակտային գրանցումներ, որից ամուսնացող տղամարդկանց թիվը կազմում է՝

18-22 տարեկան – 102 կամ 10.9 % (128 կամ 10.7 %)

23-27 տարեկան – 472 կամ 50.5 % (569 կամ 48.05%)

28-32 տարեկան – 219 կամ 23.5 % (299 կամ 25.3 %)

33-ը և բարձր – 141 կամ 15.1 % (189 կամ 16.0 %)

իսկ ամուսնացող կանանց թիվը կազմում է՝

16-17 տարեկան – 17 կամ 1.8 % (24 կամ 2%)

18-22 տարեկան – 451 կամ 48.3 % (503 կամ 42.5%)

23-27 տարեկան – 271 կամ 29.0% (411 կամ 34.7%)

28-32 տարեկան – 103 կամ 11.0 % (160 կամ 13.5%)

33-ը և բարձր – 92 կամ 9.9 % (87 կամ 7.3 %)

Ամուսնացող տղամարդկանց միջին տարիքը կազմում է 28.0 տարին, իսկ կանանցը՝ 24.4 տարին:

Կատարվել է 168 (180) ամուսնալուծության ակտային գրանցում, որոնցից 70-ը՝ համատեղ դիմումի հիման վրա, և 98-ը՝ դատարանի վճռի հիման վրա:

Ամուսնալուծվողների միջին տարիքը կազմում է 33.0 տարին: Ամուսնալուծության գրանցման համար ավելի հաճախ դիմում են կանայք: Ամուսնալուծվող քաղաքացիներից 118 զույգ ունի անչափահաս երեխա:

Կատարվել է ԼՂՀ քաղաքացիների 3 (8) որդեգրման ակտի գրանցում՝ դատարանի վճռի հիման վրա:

2016թ. կատարված ակտային գրանցումներից 147-ը՝ (159) վերաբերվում է հայրության հաստատմանը, 55-ը՝ անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը (69), 76-ը՝ ուղղմանը (77) և 15-ը՝ ակտային գրանցումների վերականգնմանը (31):

Հաշվետու տարվա սեպտեմբեր ամսում սկսվել են ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի մասնաշենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները, որը ավարտին կհասցվի 2017 թվականի առաջին եռամսյակում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումն ըստ ՔԿԱԳ տարածքային բաժինների բնութագրվում է հետևյալ կերպ.

ՔԿԱԳ բաժնի վերանորոգում	ծնունդ	մահ	ամուսնություն	ամուսնալուծություն	որդեգրում	հայրության ճանաչում	ուրբում	ա.ա.հ փոխում	ակտի վերականգնում	տեղեկանք	կրկնօրինակ	ծանուցում	այլ վայրից ստ. տեղ. և վկ. խոն.	պետտուրք
Ստեփանակերտ	1022	430	353	84	1	53	19	28	5	248	341	-	4	2.724000
Ասկերան	270	172	101	23	-	15	21	7	3	97	75	3	3	844.000
Մարտակերտ	352	195	107	13	1	21	2	1	2	123	210	4	-	1.161000
Մարտունի	341	228	136	16	-	10	9	7	-	72	109	-	-	771.000
Հաղրուֆ	162	109	88	7	1	14	21	6	2	67	72	1	-	621.000
Շուշի	103	39	40	9	-	2	2	-	1	33	13	2	2	252.000
Շահումյան	58	12	24	3	-	14	1	3	22	8	1	3	3	129.000
Քաշաթաղ	170	37	858	13	-	18	1	3	-	20	31	15	9	409.000
Ընդամենը	2478	1222	934	168	3	147	76	55	15	668	852	28	21	6.911.000

Ինչպես երևում է աղյուսակից, ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի վրա է ընկնում գործերի 38.8%, ՔԿԱԳ Ասկերանի տարածքային բաժնի վրա՝ 11.9%, ՔԿԱԳ Մարտակերտի տարածքային բաժնի վրա՝ 15.5%, ՔԿԱԳ Մարտունու տարածքային բաժնի վրա՝ 13,9%, ՔԿԱԳ Հաղրուֆի տարածքային բաժնի վրա՝ 8,2 %, ՔԿԱԳ Շուշիի տարածքային բաժնի վրա՝ 3.7%, ՔԿԱԳ Շահումյանի տարածքային բաժնի վրա՝ 2,0% և ՔԿԱԳ Քաշաթաղի տարածքային բաժնի վրա՝ 6.0 % ծանրաբեռնվածություն:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից 2016թ. տրվել են 86 (154) վկայականների կրկնօրինակներ, այդ թվում՝ 75-ը (122)՝ ծննդյան, 3-ը (6)՝ մահվան, 7-ը (18)՝ ամուսնության, 1-ը (7)՝ ամուսնալուծության, 0 (1) հայրության ճանաչման, ինչպես նաև 693 (604) ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ, որոնց դիմաց գանձվել է 132.000 (272.000) դրամ պետտուրք:

ՔԿԱԳ հանրապետական արխիվում 1992թ. սեպտեմբերի 2-ից առ այսօր պահպանված ակտային գրանցումների թիվը կազմում է 110.115:

Այսպիսով, 2016թ-ին ՔԿԱԳ տարածքային բաժինների և ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից հոգուտ պետական բյուջեի գանձվել է 7.043.000 (7.684.000) դրամ:

Նոտարական գործունեության կազմակերպում.

Առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել նաև նոտարիատի գործունեությունը: Կատարվել է ստացված դատական ակտերի ուսումնասիրություն և հաշվառում:

Կազմակերպվել է նոտարական վիճակագրության ամփոփում և պրակտիկայի ուսումնասիրություն, ԼՂՀ պետական նոտարների կողմից հաստատված կտակների երկրորդ օրինակների հաշվառում և պահպանում:

ԼՂՀ նոտարական գրասենյակների կողմից 2016թ. կատարվել են 13.981 (14.597) նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է 16.077.300 (17.843.700) դրամ պետական տուրք:

Կատարված նոտարական գործողությունների ընդհանուր թվից 5.498-ը բաժին է ընկել Ստեփանակերտի թիվ 1 (5.593), 4.061-ը՝ Ստեփանակերտի թիվ 2 (4.127), 1280 - ը՝ Ասկերանի (1220), 412-ը՝ Մարտակերտի (652), 1.139-ը՝ Մարտունու (1.319), 747-ը՝ Հադրութի (575), 447-ը՝ Շուշիի (469), 342-ը՝ Քաշաթաղի (548) և 55-ը՝ Շահումյանի (94) նոտարական գրասենյակներին: Այսինքն, հաշվետու ժամանակաշրջանում 2015թ. համեմատությամբ նոտարական գործողությունների քանակը նվազել է 616-ով, իսկ պետական տուրքը նվազել է 1.766.400 դրամով:

2016թ. ԼՂՀ նոտարական գրասենյակները կատարել են հետևյալ նոտարական գործողությունները.

կտակների հաստատում	- 140 (177)
պայմանագրերի վավերացում	- 2.434 (2.654)

այդ թվում՝

անշարժ գույքի օտարման պայմանագրերի վավերացում	- 1.249 (1.392)
անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի վավերացում	- 185 (256)
անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի վավերացում	- 19 (28)
գրավի պայմանագրերի վավերացում	- 522 (494)
շարժական գույքի վերաբերյալ պայմանագրերի վավերացում	- 19(18)
այլ պայմանագրերի վավերացում	- 440 (466)
տրվել են սեփականության իրավունքի վկայագրեր	- 76 (41)
տրվել են ժառանգության իրավունքի վկայագրեր	- 553 (620)
լիազորագրերի հաստատում	- 2.664 (2.968)
փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկության հաստատում	-1.566 (1.352)
փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում	- 2.176 (2.449)
այլ նոտարական գործողություններ	- 4.372(4.336)

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ Ստեփանակերտի թիվ 1 նոտարական գրասենյակի վրա է ընկնում գործերի ծանրաբեռնվածության 39.3%-ը, Ստեփանակերտի թիվ 2 նոտարական գրասենյակի վրա՝ 29.1%-ը, Ասկերանի նոտարական գրասենյակի վրա՝ 9.2%-ը, Մարտակերտի նոտարական գրասենյակի վրա՝ 2.9%-ը, Մարտունու նոտարական գրասենյակի

վրա՝ 8.2%-ը, Հաղորդի նոտարական գրասենյակի վրա՝ 5.4 %-ը, Շուշիի նոտարական գրասենյակի վրա՝ 3.1%-ը, Քաշաթաղի նոտարական գրասենյակի վրա՝ 2.4%-ը և Շահումյանի նոտարական գրասենյակի վրա՝ 04%-ը:

Այսպիսով, 2016թ.-ին ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից հոգուս պետական բյուջեի գանձվել է 23.317.300 դրամ (25.713.700 դրամ) պետական տուրք, այդ թվում՝

- ✓ նոտարական գրասենյակների կողմից - 16.077.300 դրամ,
- ✓ ՔԿԱԳ տարածքային բաժինների և ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից - 7.043.000 դրամ,
- ✓ ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի կողմից - 197.000 դրամ:

2016 թվականին նախատեսվող միջոցառումները. 2017թ. նախատեսվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում նոր էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ պայմանավորված կշարունակվի ակտային գրանցումների թվայնացման աշխատանքներ, ինչը կնպաստի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում վարչարարության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում նաև վարչարարության ժամկետների կրճատմանը, քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմանների սահմանմանը:

7. Պետական ռեգիստրի գործունեության կազմակերպում

Արդյունքները: 2016 թվականի ընթացքում ներդրվել է էլեկտրոնային ռեգիստրի համակարգը (www.e-register.am) և շարունակվել գործունեությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման ուղղությամբ:

Միստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեգիստրի տարածքային բաժինների նկատմամբ, նրանց տրվել են ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ: Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 99 (118) առևտրային և 27 (235) ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 306 (410)-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), տրվել է իրավաբանական անձի պետական գրանցման 3 (10) վկայականի կրկնօրինակ, 8 (11)-ի գործունեությունը դադարեցվել է: Սահմանված կարգով պետական հաշվառման են վերցվել 2 (5) իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում, 3 իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և 7 հիմնարկ՝ (40) ստացել ընթացիկ պետական հաշվառում, 1 (6) հիմնարկ՝ հանվել պետական հաշվառումից:

Պետական հաշվառման են ենթարկվել 650 (581) անհատ ձեռնարկատեր, 1 (2)-ը՝ վերահաշվառվել, 101 (145)-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 31 (24)-ի գործունեությունը դադարեցվել է:

Կենտրոնական մարմնի կողմից գրանցվել են 101 (126) ֆիրմային անվանումներ: Պետական միասնական գրանցամատյանից տրվել են 426 (424) տեղեկանքներ:

Վերոգրյալ գրանցումների դիմաց գանձվել է 6.418.500 (9.691.500) դրամ պետական տուրք:

Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանումների օգտագործմամբ պայմանավորված 9.600.000 (11.400.000) դրամ պետական տուրք և 6 իրավաբանական անձանց տարեկան պետական տուրքի պարտավորության ժամանակին չկատարմամբ պայմանավորված 552.200 (105.000) դրամ հաշվարկված տույժ, որի հաշվակցմամբ հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 16.570.700 (21.196.500) դրամ պետական տուրք:

Գործակալության կենտրոնական մարմնի և տարածքային բաժինների կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում արտաբյուջե է մտցվել 959.000 (1.516.000) դրամ:

8. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ

Արդյունքները: 2016 թվականին ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների կողմից հարուցվել են 5410 կատարողական վարույթներ՝ նախորդ տարուց մնացած 1521-ի հետ կազմելով 6931: Նշված կատարողական վարույթներից փաստացի կատարման հիմքով կարճվել են 2253-ը, ավարտվել՝ 3164-ը: Անավարտ կատարողական վարույթների մնացորդը կազմում է 1514 :

2016 թվականին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից փաստական գանձման է ենթարկվել 1.017.476.023 (878.428.463) դրամ, այդ թվում պետության օգտին՝ 68.238.733 (89.327.089) դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ 87.760.232 (173.046.086) դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ 861.477.058 (616.055.288) դրամ:

Չբռնագանձված գումարի չափը կազմում է 1.936.587.067 (2.014.784.908) դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության կողմից հայտարարվել են արգելադրված գույքի ամենամսյա հարկադիր աճուրդ-վաճառքներ, որոնց իրացումից ստացված գումարներն ուղղվել են պահանջատերերի պարտքերի մարմանը:

Հաշվետու տարվա սեպտեմբեր ամսից ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության հետ հարցումները իրականացվում են Էլեկտրոնային եղանակով՝ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանարության համակարգի միջոցով: 2017 թվականին նախատեսվում է ընդլայնել Էլեկտրոնային հարցումներ իրականացվող մարմինների շրջանակը:

Առկա խնդիրները: Չնայած համակարգային վերահսկողությանը և ստուգումներին, այնուամենայնիվ, հարկադիր կատարողների մոտ գտնվող

կատարողական վարույթներում շարունակում են տեղ գտնել կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետների խախտումներ, ինչը պայմանավորված է հարկադիր կատարողների աշխատանքային գործունեության ծանրաբեռնվածությամբ:

9. Դատական փորձաքննությունների լաբորատորիա

Արդյունքները: 2016 թվականին փորձաքննությունների կատարման համար լաբորատորիայում գրանցվել է մուտքերի աննախադեպ աճ, թվով 898 (488) հատ` այդ թվում ներառված են նախորդ տարվանից փոխանցված մուտքերը, ինչը լաբորատորիայի գործունեության 22 տարիների ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է:

Նշված մուտքերի աննախադեպ աճը պայմանավորված է 2016 թվականի ապրիլյան դեպքերի հետ: Փորձաքննության աշխատանքներին համագործակցության շրջանակներում ներգրավվել են նաև ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Գիտությունների ազգային ակադեմիա «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» երկուական փորձագետներ:

Նշված մուտքերից 103 (118)-ի կատարումը փախանցվել է 2017 թվական: Նախորդ տարվանից փոխանցված մուտքերի թիվը կազմել է 123 (72):

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում գրանցված 898 (488) մուտքերից կատարմամբ ավարտվել և նախաձեռնողներին է հանձնվել 752-ը (344), ըստ տեսակների` 1134 (379) փորձաքննություն:

Ըստ նախաձեռնողների մուտքերի բաշխվածության պատկերը հետևյալն է`

1. ԼՂՀ ոստիկանություն – 531,
2. ԼՂՀ դատախազություն– 18,
3. ԼՂՀ դատարաններ - 122,
4. ԼՂՀ ՖՆ ՔԲ – 1,
5. ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿԾ – 119,
6. ԼՂՀ ԿԱ ԱԻՊԾ – 89,
7. Այլ մուտքեր - 18:

Նշված մուտքերից, առանց կատարման, նախաձեռնողներին հետ են վերադարձվել 43 (26) մուտքեր:

Հանձնաժողովային և համալիր կարգով կատարվել են 4 (6) և 378 (34), իսկ միանձնյա` 370 (304) փորձաքննություններ:

Փորձագետները հարցաքննության և դատական նիստերին մասնակցել են 23 (25) անգամ:

Դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետները ուսումնասիրել են 3465 օբյեկտներ:

Հաշվետու տարում

Առկա խնդիրները. Դատական փորձաքննությունների ոլորտում կարևորագույն խնդիր է հանդիսանում որոշ տեսակի փորձաքննությունների կազմակերպման գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում համապատասխան որակյալ մասնագետների բացակայությունը, ինչը հնարավորություն չի տալիս ընդլայնել լաբորատորիայի կողմից իրականացվող փորձաքննությունների տեսակները: Բացի այդ, դատական փորձաքննությունների լաբորատորիան շենքային պայմանների բարելավման կարիք ունի:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ

Արդյունքները: 2016 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվի կողմից հիմնարկ-ձեռնարկություններից և կազմակերպություններից ընդունվել է մշտական պահպանման 4266 (10483) անձնական կազմի 1052 (1040), ժամանակավոր 409, երկարաժամկետ 527 գործ:

ԼՂՀ քաղաքացիներից ընդունվել է սոցիալ-իրավական բնույթի 1128 (1111) դիմում և տրվել են համապատասխան արխիվային տեղեկանքներ: իրականացվել է 254 (126) հարցում: Թվայնացվել է 72.032 (64169) թերթ և 13.709 ֆայլ: Կազմավերականգնողական լաբորատորիայում վերականգնվել և վերանորոգվել է 2446 (2587), կարվել է 7833 (9487) և կազմապատվել է 364 (370) գործ:

Ցուցակագրվել է մշտական պահպանության 670, անձնակազմին վերաբերվող՝ 2755, երկարաժամկետ պահպանության ենթակա՝ 18, իսկ ոչնչացման համար առանձնացվել է 67 գործ: Մեթոդիկ և պրակտիկ օգնություն է ցուցաբերվել գերատեսչական արխիվներին՝ արխիվային փաստաթղթերի պահպանման պայմանների հետագա բարելավման և ապահովման նպատակով: Անց է կացվել փորձագիտական հանձնաժողովի 4 նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել է 150 (145) ցուցակ՝ 16.242 (7282) պահպանվող միավորների ընդհանուր քանակով:

Հաշվետու տարում լրիվությամբ փոխվել է «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ մասնաշենքի տանիքը:

Առկա խնդիրները. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվը շենքային պայմանների բարելավման կարիք ունի:

11. Մարմնի վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները

Հաշվետու ժամանակաշրջանում նախարարության աշխատակազմում հաստատված հաստիքների քանակը կազմել է 108 (107), որոնցից 51 (50)-ը՝ քաղծառայության պաշտոնների, 1-ը՝ քաղաքական, 2-ը՝ հայեցողական, 9-ը՝ նոտարների, 27-ը՝ (26) ԴԱՀԿԱ ծառայության, 18 (19)-ը՝ տեխնիկական սպասարկումն իրականացողների հաստիքներ են:

Նախարարության 2016 թվականի հաստատված և ճշտված բյուջեն կազմել է 335.366.100 (333.341.000) դրամ: Աշխատավարձի վարձատրության հաստատված և ճշտված բյուջեն կազմել է 281.654.7 (277.811.600) դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 279.822.102 (272.169.675) դրամ:

Վարչական սարքավորումների հաստատված և ճշտված բյուջեն կազմել է 1.000.000 (2.000.000) դրամ, փաստացին՝ նույնպես 1.000.000 դրամ:

2016 թվականին նախարարությանը պատկանող ավտոմեքենաների քանակը 8-ն է:

12. 2017 թվականին նախատեսվող միջոցառումները

2017 թվականին նախարարությունը շարունակելու է գործունեությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության կատարելագործման և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ և հանդես է գալու անհրաժեշտ նախաձեռնություններով:

Նախարարության գործունեության համար ուղենիշ է հանդիսանալու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրի դրույթները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեության 2017 թվականի միջոցառումների ծրագիրը:

Աշխատանքներ են իրականացվելու օրենսդրության ստեղծման, կատարելագործման, առկա բացերի լրացման և գործող օրենքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործընթացը շարունակելու ուղղությամբ:

Միջոցներ կձեռնարկվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական տեղեկատվական «Arlexis» համակարգի զարգացման ուղղությամբ:

Շարունակվելու է գործունեությունը դատախիրավական համակարգի գործունեության հետագա կատարելագործման ուղղությամբ:

Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է լինելու անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը, հանրային պաշտպանի գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների դիտարկումը:

ԼՂՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է Էլեկտրոնային եղանակով հարցումների կատարման շրջանակը ընդլայնել:

Նախարարության խնդիրներից մեկը բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացումն է, հետևաբար, աշխատանքներ կտարվեն՝ վերացնելու այն գործառույթները, որոնք քաղաքացիների համար ստեղծում են բյուրոկրատական քաշքշուկ և անհարմարություն:

Նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու, ժամկետները կրճատելու և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմաններ սահմանելու նպատակով՝

նախարարությունը հանդես կգա անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնություններով:

Շարունակվելու են նախարարության ստորաբաժանումներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և գործառույթների ավտոմատացման գործընթացները:

Շարունակվելու են 2016 թվականին պետական ռեզիստրում ներդրված էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքները, որը կապահովի իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործառույթների անխափան իրագործումը:

Ակտիվացվելու է համագործակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ համապետական խնդիրների լուծման գործում նրանց ներգրավելու նպատակով: Հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվելու են նոր մեխանիզմներ:

Շարունակվելու է ակտիվ համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական դպրոցի և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ:

Միջոցներ են ձեռնարկվելու նաև այլ երկրների արդարադատության մարմինների հետ կապերի և փոխհարաբերությունների հաստատման ուղղությամբ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ